Զօր. Նազարբէգեանը օգտագործեց այս տրամադրութիւնը և մայիս 24–ին տուեց յարձակման հրաման: Նոյն օրը Ղարաքիլիսայի մօտ տեղի ունեցաւ յաջող ճակատամարտ. Թիւրքերը ջարդուած՝ խուճապով քաշուեցին դէպի Համամլու: Սակայն, Թշնամին սպառնում էր մեր աջ թևին. Անդրանիկը հեռացել էր Ջալալ–Օղլիից դէպի Դսեղ՝ բանալով ահագին տարածութիւն Թիւրքերի առջև:

Տաք և մեղ համար յաջող յարձակողականը շարունակուեց և մայիս 25 ու 26–ին: Այդ երկու օրւայ ընթացքին տեղի ունեցան յամառ և արիւնահեղ ճակատամարտներ: Մայիս 26–ի երեկոյեան Թշնամին քշուած էր Գեաղա–Մայմեխ սարից. հայերը գրաւել էին Հաջի–Ղարա գիւղը, Բեղորդալը: Թիւրքերը տուին ահագին զոհեր:

Ստանալով օժանդակ նոր ուժեր ու թնդանօթներ՝ մայիս 27–ին Թիւրքերը դիմեցին հակայարձակման և արիւնահեղ կռիւներից յետոյ նորից դրաւեցին Բեղորդալը: Աջ թևից սպառնացող հարուածի պատճառով՝ ստիպուած նահանջեցին և հայերի կենտրոնական ուժերը ու մայիս 28–ին դիրքեր բռնեցին Բոզիգիւղ և Նիկիտինո գիւղերի մօտ՝ փակելով Երեւանի ճանապարհը: Անդրանիկը մայիս 30–ին Դսեղից անցաւ Դիլիջան:

Ղարաքիլիսայի ճակատամարտներում հայ զինուորը երեւան բերեց ռազմական բարձր կարողութիւն և անսահման հայրենասիրութիւն: Բազմաթիւ զոհեր տուեց նա: Շատերը ընկան հերոսական մահով: Դրանց մէջ էր թնդանօթային մարտկոցի հրամանատար հերոս Տէր–Մովսիսեանը: Դրանց մէջ էր և Հայաստանի ապագայ վարչապետ Հ. Օհանջանեանի անդրանիկ զաւակը՝ Մոնիկը, որ մի խումբ գաղափարական ուսանողների հետ գտնուում էր առաջաւոր դիրքերում, մասնակցել էր բազմաթիւ ճակատամարտների, ստացել քաջութեան նշան և որ անհետ կորաւ Ղարաքիլիսայի կռիւներում:

Ղարաքիլիսայի ճակատամարտը և նոյն օրերին Սարդարապատ–Բաշ Աբարանում տեղի ունեցող կռիւները ահագին տպաւորութիւն թողեցին Բաթումում: Դրանից յետոյ էր, որ Վեհիբ փաշան, Էնվէր փաշայի կողմից դինակցութիւն առաջարկեց հայ պատգամաւորներին և մերժում ստացաւ:

*

Ղարաքիլիսան գրաւելուց յետոյ, Թիւրքերը արշաւեցին դէպի հիւսիս՝ Թիֆլիսի ուղղութեամբ: Միաժամանակ ոտքի ելաւ և Սաղախլու–Սանդարի շրջանի մահմեդականութիւնը, որ կտրեց երկաթուղային հաղորդակցութիւնը և թալանում ու կոտորում էր փախստական հայերին: Մայիս 22–ին Անդրկ. Կառավարութիւնը որոշեց խնդրել Հ. Ց. Դաշնակցութեան և Մուսաւաթին՝ ուղարկել երեքական ներկայացուցիչներ այդ շրջանի Թուրքերին հանդստացնելու համար, բայց ալեկոծած տարերքը դպելու հնարաւորութիւն չկար այլևս: Հարաւից ջարդում ու կոտորում էին Թիւրք ասկերները,